

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ  
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**

**ՀՐԱՄԱՆ  
N - 1003-Ա**

**23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017 ԹՎԱԿԱՆ**

**ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի  
N 749-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 68-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1229-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի «դ» ենթակետը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .**

1. Հաստատել ստանդարտացման ազգային մարմնի կառավարման խորհրդի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի «Ստանդարտացման ազգային մարմնի կառավարման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» N 749-Ա հրամանը:
3. Հաստատել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
4. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ենոք Ազարյանին՝ սահմանված կարգով ապահովել «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Կարապետյանին:

**ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ**

Կ Ա Ձ Մ

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

- |                       |   |
|-----------------------|---|
| Սուրեն Կարայան        | - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար   |
| Ռոբերտ Մակարյան       | - ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ   |
| Հայկ Ա. Հարությունյան | - ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ                                 |
| Բորիս Դեմիրխանյան     | - ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ                                  |
| Արամ Բադալյան         | - ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի առաջին եղակալ                    |
| Արմեն Կարապետյան      | - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար               |
| Արսեն Ղազարյան        | - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ   |
| Անդրանիկ Ալեքսանյան   | - Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն                               |
| Սամվել Զաքարյան       | - Հայաստանի դեղ արտադրողների և ներմուծողների միության գործադիր տնօրեն                                 |
| Վազգեն Սաֆարյան       | - «Հայրենական ապրանքարտադրողների միություն» հասարակական կազմակերպության նախագահ                       |
| Մելիտա Հակոբյան       | - Հայաստանի սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ  |
| Ենոք Ազարյան          | - «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (կառավարման խորհրդի քարտուղար) |

Կազմված է \_\_\_\_\_ 2017թ. և  
բաղկացած \_\_\_\_\_ թերթից  
Տպագրված է ընդամենը 2 օրինակ  
Օրինակ \_\_\_\_\_

**Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է**

Հայաստանի Հանրապետության  
տնտեսական զարգացման և  
ներդրումների նախարարի

«...» ..... 2017թ.

N ... - Ա հրամանով

ՀՀ տնտեսական զարգացման և  
ներդրումների նախարար՝

\_\_\_\_\_ Ս.ԿԱՐԱՅԱՆ

**Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

«13» 10. 2003թ.

գրանցման թիվ 222.120.00210

վկայական 03Ա061115

հարկ վճարողի հաշվառման համար՝  
00081133

«08» 02. 2007թ. գրանցված

կանոնադրության

Թիվ \_\_\_\_\_ լրացումը գրանցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ

«-----» ----- 2017թ.

«ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ  
(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

1. «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության  
կանոնադրության 10-րդ բաժնի 19-րդ կետից հետո լրացնել նոր՝ 19.1-ին կետ հետևյալ  
բովանդակությամբ.

«19.1 Կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Ստանդարտացման ազգային  
մարմնի կառավարման մարմինն է, որը կազմված է Խորհրդի նախագահից, 10  
անդամներից՝ ստանդարտացման գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 5  
պետական կառավարման մարմինների և 5 ոչ պետական կազմակերպությունների  
ներկայացուցիչներից:

Խորհրդի անհատական կազմը սահմանում է լիազորված պետական կառավարման մարմինը:

Ստանդարտացման ազգային մարմնի տնօրենը Խորհրդի քարտուղարն է և չի կարող հանդես գալ որպես Խորհրդի նախագահ:

Խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա է քվեարկության ձայնի իրավունք ունեցող Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամների կողմից:

Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ:

Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստին ներկա անդամների ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

Խորհուրդը՝

1) ընդունում է որոշումներ Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության պլանավորման և գործունեության հետ կապված խնդիրների կանոնակարգման վերաբերյալ:

2) հաստատում է Ստանդարտացման ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը և հեռանկարային գործունեության հնգամյա ռազմավարությունները:

3) ստեղծում է աշխատանքային խմբեր՝ Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության հետ կապված հարցերի ուսումնասիրության և համապատասխան որոշումների նախապատրաստման համար:

4) դիմում է շահագրգիռ կողմերին՝ տարբեր հարցերի շուրջ կարծիք արտահայտելու առաջարկով:

5) քննարկում է Ստանդարտացման ազգային մարմնի հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և ներկայացնում է առաջարկություն՝ այն լիազորված պետական կառավարման մարմնի հաստատմանը ներկայացնելու վերաբերյալ:

6) քննարկում, հաստատում և հրապարակում է Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության տարեկան արդյունքները:

7) սահմանում է ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային ռազմավարությունը:

8) համապատասխան շահագրգիռ մարմինների և ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների առաջարկությունների հիման վրա ընդունում է ստանդարտացման ամենամյա ծրագիրը:

9) ապահովում է ստանդարտացման ազգային համակարգի համապատասխանությունն ազգային տնտեսության շահերին, նյութատեխնիկական բազայի ներկա վիճակին և գիտատեխնիկական առաջընթացին:

10) առաջարկություն է ներկայացնում ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների ստեղծման, լուծարման, դրանց կանոնադրության և աշխատանքային ծրագրերի ընդունման վերաբերյալ, համակարգում և իրականացնում է դրանց գործունեության մշտադիտարկումը, ինչպես նաև մեթոդական ղեկավարումը:

11) համակարգում է Հայաստանի Հանրապետությունում ազգային, միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքները՝ այդ աշխատանքների կատարմանը

ներգրավելով շահագրգիռ կողմերին, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներին և համապատասխան փորձագետներին.

12) հաստատում, հրապարակում և լիազորված պետական կառավարման մարմին է ներկայացնում հաշվետվություն Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագրի կատարման վերաբերյալ.

13) իրականացնում է Ստանդարտացման ազգային մարմնի կանոնադրությամբ Խորհրդին վերապահված այլ լիազորություններ: »

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության բաղկացուցիչ մասը: